


ՀԱՅ ՄԵԾԱՐԺԵՔ ԵՐԱԺԻՇՏ ՄԸ
Մ Ո Ս Կ Ո Ւ Ա Յ Ի Մ է Զ

—oo—

Պրոլետարը մեղի կը յայտնէ անունը հայ Երաժիշտի մը, Կոստանդին Սարաճէվ (Սարաճան) որ այժմ Մոսկուայի Երաժշտական ամենէն ուշագրաւ դէմքերէն մին է դարձած: Սարաճան ծնած է Թիֆլիս, աւարտած է Մոսկուայի Երաժշտանոցի ջութակի և Երգահանական տեսարանութեան բաժինները: Եւսոյ, անցնելով Լայփցիկ, հետեւած է Արթուր Նիքիչի նուազախումբեր վարելու յատուկ դասընթացքին: Այսուհետեւ Մոսկուայի մէջ տուած է սենիֆոնիք համերգներ, ինքն իսկ զեկավարելով խումբերը: 1926ին անցած է Վիեննա ու Փրակա, ուր մեծ յաջողութիւն գրաւած է իրր նուազախմբի վարիչ: Ներկայիս՝ Մոսկուայի Երաժշտանոցի փրոֆէսօրներէն է: Սարաճան առաջինն է որ հիմնած է Մոսկուայի մէջ նուազախումբի զեկավարութեան դասարան մը: Մոսկուայի Երաժշտանոցի այդ բաժինէն շրջանաւարտ ելած աշակերտները հիմա կը գործեն Երաժշտական զանազան հաստատութիւններու մէջ:

Մոսկուայի սէնֆոնիք ընկերութիւնը կը կրէ փրոֆ. Կ. Սարաճանի անունը:



ՄԵՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—oo—

«Հայաստանի Կուլտուրայի Պատմութեան ինստիտուտ»ին համեստ աջակցութեան բաժին մը բերելու համար մեր բացած հանգանակութեան, հետեւեալ նոր նուերները եկան աւելնալ. —

Տօֆք. Յովի. Սըգրեան՝ 200 ֆր., Տօֆք. Յ. Գանքարեան՝ 1 տուրիական ոսկի (20 ֆրանֆ), Բարիկեան (Նիկոսիա), 1 տոլար (18 ֆր. 50):

Կը յուսանի որ ուրիշներ ալ պիտի հետեւին ցարդ իրենց նուերներով այս հանգանակութեան մասնակցողներուն

օրինակին: Նուերները դրկել մեր զանձապահին, Dr. J. Artignan, 111, Avenue de l'Union, Arnouville - lès - Gonesse (S. et O), France. Chèques Postaux, Rouen № 9888:

Այն նուիրատուներէն, որ արձանագրուած են բայց դեռ իրենց խոստացած գումարը չեն դրկած, կը խնդրենք որ հանին դրկել իրենց նուերը մեր զանձապահին:

Մինչեւ հիմա գոյացած գումարն է (վճարուածն ու արձանագրուածը միասին) 3396 ֆր. 50 սանթիմ: Պ. Յ. Գիւրտեանի նուերը, 10 տոլար, արձանագրած էինք 250 ֆրանֆ. բայց երբ մեր աշխատակիցն այդ գումարն ուղարկեց, տոլարն արդէն ինկած էր եւ 10 տոլարը բանեց 173 ֆրանֆ:

Մենք արդէն իսկ գնեցինք Ծայս զերման հոչակաւոր Տան Փարիզի մասնանիւդէն՝ լուսանկարչական առաջնակարգ գործիք մը (Trona տեսակէն), 12 հատ շասի, 1 տիտաֆոթ (գոյներու գոտիչ գործիք), 1 սաք, 1 միլրաֆոթ (լուսանկարներու մեծացման համար):

Գնեցինք նաև Քուտաֆի Տունին 25 տուփ Փիլմ, եւ դեղօրայք: Այդ բոլորին համար վճարեցինք 3264 ֆր. 95 ս., փոխանակ 4100 ֆր. 85 ս.ի: Այդ կարեւոր գեղչը կը պարտինք մեր հայրենասէր եւ անձնուէր բարեկամ՝ ծանօթարուեստագէտ – լուսանկարիչ Յակոբ Սէմէրնեանի (Phébus), որ այդ գնումները ինքն իսկ կատարեց:

Ամբողջութիւնը յանձնեցինք Հօկի Ֆրանսայի Կեդր. Վարչութեան, որ ֆիչ օրէն կ'ուղարկէ Երեւան՝ Հայաստանի Կուլտուրայի Պատմութեան ինստիտուտի նախագահ Պ. Յակոբ Զօրեանին:

Կը յիշեցնենք մեր ընթերցողներուն այն միւս գործիքներն ու իրենէները որոնց պէտք ունի Հայաստանի այդ Գի-

տական Հիմնարկութիւնը եւ որոնց ցուցակը հրատարակած էին մեր անցեալ քիւով, — այն է՝ էպիտիոսքօփ Մը (Փրոժէքսիօնէրու գործիֆ), զրամետենայ մը, երկու ֆօնօկրաֆ՝ ֆօլքլօրական նիւրեր հաւաքելու եւ զրի առնելու համար, սինէմայի դիւրատար գործիֆ մը, գիտական արշաւախումբերու համար վրան մը՝ իր պարագաներով, կիսամարդատար եւ բենատար ֆօրտի օթօմօղի մը, եւն.։

Թող մեր ընթերցողներն ու բարեկամները փուրացնեն իրենց նուէրները, որպէս զի հանգանակիչ Յանձնախումբը կարենայ հետզիետէ զնել ու Երեւան դրկել այդ միւս առարկաներն ալ որոնք մեծապէս պիտի դիւրացնեն այդ գիտական կահատին բազմարդիւն գործունելութիւնը։

ԱՍԱՑԱՆՔ

Գուրգէն Մահարի, Մրգահաս, բանաստեղծութիւններ. Պետհրատ, 1932, Երեւան։ Գին 12 սուրլի։

Հոկտեմբեր - Նոյեմբեր, Տարեգիրք զրականութեան, արուեստի, գիտութեան և ժողովրդական տնտեսութեան, խմբագրութիւն՝ Եղիշէ Զարենց, Ակադ. Բակունց, Եղիա Զուրար. սպատկերազարդ ստուար հատոր մը. բոլոր անդամաթերթերը, գծագիր պորտրէները, շատիկը և սուլքէր - շաղկիկը՝ նկարիչ Հ. Կոջոյեանի։ Պետհրատ, Երեւան, 1932։ Գին 60 սուրլի։

Մանուկ Աբեղեան, Տաղաչափութիւն։ Հրատարակութիւն Մելքոնեան Ֆօնտի։ Երեւան, 1933։

Կոմիտաս Վարդապետ. Դաշնաւորեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեաց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, վասն միասն ուրական խմբի. վերատեսեալ ի ձեռն Վար-

դան Սարգսեանի. Տաղագրեալ արդեամբք Հայկացն Վարդանեանի։ Հրատարակութիւն Կոմիտասեան Յանձնաժողովի։ Տաղագրութիւն Հ. Մեմերձեանի. զարդագրութիւն Ռ. Շիշմանեանի. Փարիզ, 1933։ Գին 50 Փրանք։ Դիմել Հայոց Եկեղեցւոյ Խորհրդարան, 15, Rue Jean-Goujon, Օր. Մ. Բարայեան, 17, Rue Deneff-Rochereau, Paris (5e), Ա. Հարենց, 192, Rue Armand Silvestre, Bécon les Bruyères, Seine, France։

Գարեգին արքեպոսկ. Յովսէփեանց. Միթրար Այրիվանեցի, Խորագիւտ արձանագրութիւն և Երկեր. Երուսաղէմ, Տաղարան Սրբոց Յակոբեանց, 1931։

Վահան Թէֆէեան. Միթ, քերթուածներ (1919 - 1933). Փարիզ, տաղարան Արաքս 1933։ Գին 12 Փրանք։ Դիմել Հեղինակին, Mr. Vahan Tékéian, 22, Rue Saint - Sulpice, Paris։

Դաւարշ Նարդունի. Մեղեդիներ, Մեղեդիներ, Հէքեաթ և բանաստեղծութիւն. Փարիզ, 1933։ Գին 15 Փրանք։ Դիմել Direction du journal « Haratch », 17, Rue Damesme, Paris։

Գուրեան Մատենադարան, թիւ 2. Ամբողջ Երկեր Եղիշէ Պատրիարք Դուրեւանի. Ա. Պատմութիւն Հայ մատենագրութեան. Երուսաղէմ, Տաղարան Սրբոց Յակոբեանց, 1933։ Գին 3 չին կամ 15 Փր. Փրանք։

Ե. Աղարօն, Ի՞նչ կը խորհին Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան Հիմնադիրները. 1933. Փարիզ, Տաղալը. Պահը Եղիշարը։

Ա. Ռազմունի, « Աղջային կեանք », թատերախաղ գաղթահայ կեանքէ, Երեք արար. Փարիզ, 1933։ Գին 10 Փրանք։

The Armenian Reporter, the Paper of Armenian - American House. Published by Yanke Press, editor: Prof. Michael K. Minassian, Ph. B. :

Հայ Լրաբեր, աղատական անկախ շարաթերթ (անգլիերէն և հայերէն), Բ. Տարի, թիւ 58, 2016, Maple ave. Los Angeles, Ca-